600.0480.08.11.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 նոյեմբերի 2017 թվականի №480Ա
քաղ. Երևան

## «ԷՆԵՐԳԱՒՄՊԷՔՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՐԱՍՏԱՆԻՑ ՆԵՐԿՐՎՈՂ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԷՆԵՐԳԱՒՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Վրաստանից ներկրվող և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառվող էլեկտրական էներգիայի առավելագույն սակագինը սահմանել 25 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 30 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ընդունել ի գիտություն, որ ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար «ԷՆԵՐԳԱՒՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Վրաստանից էլեկտրական էներգիան կներկրվի և կվաճառվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող տնտեսական կարգավարման շրջանակում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի դեկտեմբերի 8-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ　　　　Մ. ԿՈՇԵՅԱՆ

ք. Երևան
8 նոյեմբերի 2017թ.